# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«28» մարտի 2024թ.

## ՀՐԱՄԱՆ N 180-Հ

## «ՎԻԶ ԷՅՐ ՀԱՆԳՐԻ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով «Վիզ Էյր Հանգրի» ավիաընկերության 2024 թվականի մարտի 21-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Վիզ Էյր Հանգրի» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Բուդապեշտ/LHBP/-Երևան/UDYZ/-Բուդապեշտ/LHBP/ 2024 թվականի հունիսի 17-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 25-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ, Սոֆիա/LBSF/-Երևան/UDYZ/-Սոֆիա/LBSF/ երթուղով՝ 2024 թվականի ապրիլի 2-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 26-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ, Դորտմունդ/EDLW/-Երևան/UDYZ/-Դորտմունդ/EDLW/ երթուղով՝ 2024 թվականի ապրիլի 2-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 26-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ և Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/ երթուղով՝ 2024 թվականի մարտի 31-ից մինչև 2024 թվականի հունիսի 16-ը՝ շաբաթական 7 (յոթ) չվերթ հաճախականությամբ և 2024 թվականի հունիսի 17-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 26-ը՝ շաբաթական 11 (տասնմեկ)

չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ:

2. Նկատի ունենալով, որ Ընկերությունը օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային ժամանակահատվածում 2024 թվականի հունիսի 17-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 25-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Բուդապեշտ/LHBP/-Երևան/UDYZ/-Բուդապեշտ/LHBP/ երթուղով Հայաստանի Հանրապետություն տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթերի հաճախականությունների պահանջներին՝ սույն կետում նշված Երևան/UDYZ/-Բուդապեշտ/LHBP/ երթուղով մեկնող ուղևորներին տրամադրվող «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով սահմանված արտոնության սկիզբ սահմանել 2024 թվականի հունիսի 17-ը՝ 36 ամսով:

3. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/ երթուղով չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի մայիսի 19-ի թիվ 245-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) 2024 թվականի ամառային նավիգացիոն ժամանակահատվածում՝ 2024 թվականի մարտի 31-ից մինչև 2024 թվականի հունիսի 16-ը՝ շաբաթական 7 (յոթ) չվերթ հաճախականությամբ և 2024 թվականի հունիսի 17-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 26-ը՝ շաբաթական 11 (տասնմեկ) չվերթ հաճախականությամբ, Դորտմունդ/EDLW/-Երևան/UDYZ/-Դորտմունդ/EDLW/ երթուղով իրականացվող չվերթները համարվում են Կոմիտեի նախագահի 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ 107-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Երևան/UDYZ/-Դորտմունդ/EDLW/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) 2024 թվականի ամառային նավիգացիոն ժամանակահատվածում՝ 2024 թվականի ապրիլի 2-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 26-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ, Սոֆիա/LBSF/-Երևան/UDYZ/-Սոֆիա/LBSF/ երթուղով իրականացվող չվերթները համարվում են Կոմիտեի նախագահի 2023 թվականի մարտի 24-ի թիվ 112-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Երևան/UDYZ/-Սոֆիա/LBSF/ երթուղով

իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) 2024 թվականի ամառային նավիգացիոն ժամանակահատվածում՝ 2024 թվականի ապրիլի 2-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 26-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմանների, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին և որոնց վրա տարածվում են Կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի մայիսի 19-ի թիվ 245-Ա հրամանի 2-րդ կետով, Կոմիտեի նախագահի 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ 107-Ա հրամանի 2-րդ կետով և Կոմիտեի նախագահի 2023 թվականի մարտի 24-ի թիվ 112-Ա հրամանի 3-րդ կետով նախատեսված արտոնությունները:

4. Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ Ընկերության կողմից ներկայացվող հայտի հիման վրա:

5. Կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվությունների տեղադրումը Կոմիտեի պաշտոնական կայքէջում:

6. Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվությունների հանձնումն Ընկերությանը:

3/28/2024

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 061/2024
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 061/2024
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

| | |
|---|---|
| Օդանավ շահագործողը<br>Aircraft Operator | «Վիզ Էյր Հանգրի» ՍՊԸ<br>"Wizz Air Hungary" LLC |
| Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը)<br>Type(s) of aircraft(s) | A320 (320, Y180), A320 (320, Y186), A321 (321, Y230), A320neo (32N, Y186), A321neo (32Q, Y239) |
| Հաճախականությունը<br>Frequency | շաբաթական 2 չվերթ<br>2 flights per week |
| Երթուղին<br>Air route | Բուդապեշտ/LHBP/-Երևան/UDYZ/-Բուդապեշտ/LHBP/<br>Budapest/LHPB/-Yerevan/UDYZ/-Budapest/LHBP/ |
| Թույլտվության գործողության ժամկետը<br>Permission validity | 17/06/2024 մինչև 25/10/2024<br>17/06/2024 till 25/10/2024 |

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF CIVIL
AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

3/28/2024

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

28 03 2024
(տալու ամսաթիվը)
(date of issue)

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 062/2024
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 062/2024
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR
SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

| | |
|---|---|
| Օդանավ շահագործողը<br>Aircraft Operator | «Վիզ Էյր Հանգրի» ՍՊԸ<br>"Wizz Air Hungary" LLC |
| Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը)<br>Type(s) of aircraft(s) | A320 (320, Y180), A320 (320, Y186), A321 (321, Y230), A320neo (32N, Y186), A321neo (32Q, Y239) |
| Հաճախականությունը<br>Frequency | շաբաթական 2 չվերթ<br>2 flights per week |
| Երթուղին<br>Air route | Սոֆիա/LBSF/-Երևան/UDYZ/-Սոֆիա/LBSF/<br>Sofia/LBSF/-Yerevan/UDYZ/-Sofia/LBSF/ |
| Թույլտվության գործողության ժամկետը<br>Permission validity | 02/04/2024 մինչև 26/10/2024<br>02/04/2024 till 26/10/2024 |

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF CIVIL
AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

3/28/2024

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

28.03.2024
(տալու ամսաթիվը)
(date of issue)

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 063/2024
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 063/2024
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

| | |
|---|---|
| Օդանավ շահագործողը<br>Aircraft Operator | «Վիզ Էյր Հանգրի» ՍՊԸ<br>"Wizz Air Hungary" LLC |
| Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը)<br>Type(s) of aircraft(s) | A320 (320, Y180), A320 (320, Y186), A321 (321, Y230), A320neo (32N, Y186), A321neo (32Q, Y239) |
| Հաճախականությունը<br>Frequency | շաբաթական 2 չվերթ<br>2 flights per week |
| Երթուղին<br>Air route | Դորտմունդ/EDLW/-Երևան/UDYZ/-Դորտմունդ/EDLW/<br>Dortmund/EDLW/-Yerevan/UDYZ/-Dortmund/EDLW/ |
| Թույլտվության գործողության ժամկետը<br>Permission validity | 02/04/2024 մինչև 26/10/2024<br>02/04/2024 till 26/10/2024 |

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF CIVIL
AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

3/28/2024

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

28.03.2024
(տալու ամսաթիվը)
(date of issue)

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 064/2024
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 064/2024
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

| | |
|---|---|
| Օդանավ շահագործողը<br>Aircraft Operator | «Վիզ Էյր Հանգրի» ՍՊԸ<br>"Wizz Air Hungary" LLC |
| Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը)<br>Type(s) of aircraft(s) | A320 (320, Y180), A320 (320, Y186), A321 (321, Y230), A320neo (32N, Y186), A321neo (32Q, Y239) |
| Հաճախականությունը<br>Frequency | 31/03/2024 – 16/06/2024՝ շաբաթական 7 չվերթ<br>31/03/2024 – 16/06/2024 - 7 flights per week<br><br>17/06/2024 – 26/10/2024՝ շաբաթական 11 չվերթ<br>17/06/2024 – 26/10/2024 – 11 flights per week |
| Երթուղին<br>Air route | Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/<br>Larnaca/LCLK/-Yerevan/UDYZ/-Larnaca/LCLK/ |
| Թույլտվության գործողության ժամկետը<br>Permission validity | 31/03/2024 մինչև 26/10/2024<br>31/03/2024 till 26/10/2024 |

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF CIVIL
AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

3/28/2024

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

28.03.2024
(տալու ամսաթիվը)
(date of issue)